Հավելված N 3
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի 29-ի
N 481-Ա հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) Ներդրումային քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով, նախարարության և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի (այսուհետ՝ նախարար) և նախարարության գլխավոր քարտուղարի հրամաններով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

4. Վարչության ներքին կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում և փոփոխում է նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

5. Նախարարի հաձնարարությամբ՝ Վարչության ղեկավար աշխատողները կարող են հանդես գալ որպես այն իրավաբանական անձանց մասնակցի (բաժնետիրոջ) լիազոր ներկայացուցիչ կամ խորհրդի անդամ, որոնց բաժնետիրոջ իրավասությունները պատկանում են Նախարարությանը, ինչպես նաև Նախարարի համաձայնությամբ՝ այլ պետական կառավարման մարմինների առաջարկությամբ՝ այն իրավաբանական անձանց մասնակցի (բաժնետիրոջ) լիազոր ներկայացուցիչ կամ խորհրդի անդամ, որոնց բաժնետիրոջ իրավասությունները պատկանում են այդ պետական կառավարման մարմիններին՝ առանց լրացուցիչ վճարի:

6. Վարչության աշխատողները կարող են համատեղության կարգով ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում՝ առանց լրացուցիչ վճարի:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Ներդրումային քաղաքականության վարչության հիմնական խնդիրներն են՝

1) օտարերկրյա և տեղական ներդրումների ներգրավում, համակարգում, խթանում և ներդրումների իրականացման համար բարենպաստ միջավայրի ձևավորում,

2) ներդրումային քաղաքականության մշակում,

3) ներդրումների և ներդրողների պաշտպանությանն ուղղված քաղաքականության մշակում և կատարելագործում,

4) ազատ տնտեսական գոտիների ձևավորման նպատակով համապատասխան քաղաքականության մշակում և վերանայում, օրենսդրական դաշտի բարելավում,

5) ներդրումների կարգավորում, ներդրումային ծրագրերի իրականացմանն ուղղված աջակցության գործիքակազմի մշակում, ինչպես նաև դրա կիրառման հետ կապված Նախարարությանը վերապահված գործառույթների իրականացման ապահովում,

6) Հայաստանի Հանրապետությունում պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) շրջանակի և քաղաքականության մշակում, պետական-մասնավոր գործընկերության ձևաչափի ներդրման և կիրառման արդյունավետության բարձրացման օժանդակում,

7) Պետական և մասնավոր ներդրումային ծրագրերի հավաքագրման, ամփոփման, համակարգման և մշտադիտարկման աշխատանքների ապահովում:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից՝

1) Ներդրումների կարգավորման և աջակցության բաժին,

2) Ներդրումային ծրագրերի և պետություն-մասնավոր գործընկերության բաժին:

IV . ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

9. Վարչությունը՝

1) իր իրավասության շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով Նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ,

2) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների համագործակցությամբ, նախապատրաստում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրին համապատասխան ներկայացնում է հաստատման Վարչության ծրագրերը, ինչպես նաև ապահովում է դրանց կատարումը,

4) իրեն հանձնարարված աշխատանքները կատարելիս տվյալ աշխատանքի կատարման պատասխանատու (առաջին հասցեատեր) լինելիս ապահովում է այլ պատասխանատուների (հասցեատերերի) կարծիքների ստացումը և կազմում ու ստորագրման է ներկայացնում Նախարարության ամփոփ դիրքորոշումը,

5) իրեն հանձնարարված աշխատանքները կատարելիս տվյալ աշխատանքի կատարման պատասխանատու չլինելիս (այլ հասցեատեր լինելիս) իր դիրքորոշումը աշխատանքի կատարման պատասխանատուին (առաջին հասցեատիրոջը) հայտնում է այնպիսի ժամկետներում, որպեսզի աշխատանքի կատարման պատասխանատուն հնարավորություն ունենա սահմանված ժամկետում կատարել այդ աշխատանքը:

10. Վարչությունը ղեկավարում է Վարչության պետը:

11. Վարչության պետը՝

1) իրականացնում է Վարչության աշխատանքների կազմակերպումը և ընդհանուր ղեկավարումը,

5) անմիջական հաշվետու է նախարարին.

2) պատասխանատու է Վարչությունում համապատասխան աշխատանքային մթնոլորտի ապահովման, Վարչությունում աշխատողների միջև աշխատանքների հավասարաչափ բաշխման և դրանց կատարման համար,

3) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը,

4) կատարում է Նախարարի, համակարգող նախարարի տեղակալի, Նախարարության գլխավոր քարտուղարի կողմից իրենց լիազորությունների սահմաններում տրված հանձնարարականները և կատարման մասին զեկուցում է հանձնարարականը տված պաշտոնատար անձին.

5) անմիջական հաշվետու է նախարարին:

12. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի կողմից:

13. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետերից մեկը՝ Վարչության պետի հանձնարարությամբ:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

14. Ներդրումների կարգավորման և աջակցության բաժնի գործառույթներն են.

1) ներդրումների ներգրավման և ներդրումային քաղաքականության մշակում և միջնաժամկետ վերանայում՝ համագործակցելով համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի հետ,

2) ներդրումների և ներդրողների պաշտպանության ապահովման համար անհրաժեշտ վերլուծությունների իրականացում, առաջարկությունների տրամադրում համապատասխան մարմիններին, քաղաքականության մշակում և դիտանցում,

3) ներդրումներին առնչվող խնդիրների շուրջ միջազգային երկկողմ և բազմակողմ համագործակցության ապահովման նպատակով բանակցային առաջարկների ներկայացում, մասնակցություն բանակցային գործընթացին և համապատասխան համաձայնագրերի մշակման աշխատանքներին,

4) ներդրումային ոլորտի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ կապերի հաստատում, զարգացում և ներդրումային ոլորտի միջոցառումներին մասնակցություն,

5) զարգացած և զարգացող երկրների ներդրումային քաղաքականության, ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցների և մոտեցումների վերլուծություն, դրանց հիման վրա համապատասխան եզրակացությունների ու առաջարկությունների ներկայացում,

6) Հայաստանի Հանրապետության մարզերում ներդրումների խթանման նպատակով համապատասխան ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացում, առաջարկությունների ներկայացում,

7) համագործակցելով Նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ՝ ներդրումների պաշտպանությանն առնչվող դասակարգիչներում Հայաստանի դիրքի բարելավման կամ պահպանման նպատակով համապատասխան քայլերի և առաջարկների ներկայացում,

8) Հայաստանում ազատ տնտեսական գոտիների ստեղծման և զարգացման քաղաքականության մշակում, համապատասխան իրավական դաշտի ապահովում, համագործակցություն համապատասխան կառույցների և մարմինների հետ, «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Նախարարությանը վերապահված գործառույթների իրականացում,

9) ներդրումային ծրագրերի իրականացմանն ուղղված աջակցության գործիքակազմի մշակում, ինչպես նաև դրա կիրառման հետ կապված Նախարարությանը վերապահված գործառույթների իրականացման ապահովում,

10) այլ գործառույթներ՝ Վարչության պետի լիազորությունների շրջանակներում տրված հանձնարարականի հիման վրա:

15. Ներդրումային ծրագրերի և պետություն-մասնավոր գործընկերության բաժնի գործառույթներն են.

1) մասնավոր, պետական, մարզային ներդրումային ծրագրերի, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի հավաքագրում, ամփոփում, համակարգում և մշտադիտարկման աշխատանքների ապահովում,

2) ներդրումային ծրագրերի էլեկտրոնային հարթակի և պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի տվյալների կառավարման համակարգի ստեղծում, կատարելագործում և վարում,

3) ներդրումային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ներդրումների և ֆինանսավորման ապահովման աշխատանքներին աջակցություն, մասնավոր ներդրողների ներդրումային ֆոնդերի և հիմնադրամների, միջազգային ֆինանսական հաստատությունների և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների հետ աշխատանքների իրականացում,

4) պետական-մասնավոր գործընկերության պետական քաղաքականության մշակում, իրականացում և դիտանցում,

5) ներդրողների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների դասակարգում, վերլուծություն, արձագանքում, առաջարկությունների մշակում և ներկայացում նախարարության համապատասխան ստորաբաժանումներին, շահագրգիռ պետական մարմիններին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը, ներդրումային հարցերի շուրջ ներդրողների հետ քննարկումների կազմակերպում,

6) համագործակցելով Նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ՝ պետություն-մասնավոր գործընկերությանն առնչվող օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված գործառույթների իրականացում,

7) ներդրումային ոլորտի ֆորումների, համաժողովների, խորհրդակցությունների կազմակերպման աշխատանքներ,

8) այլ գործառույթներ՝ Վարչության պետի լիազորությունների շրջանակներում տրված հանձնարարականի հիման վրա:

16. Վարչությունը կարող է իրականացնել իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

17. Վարչության ներքին կառուցվածքային ստորաբաժանումները ղեկավարում են ստորաբաժանումների ղեկավարները:

18. Վարչության ներքին կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներն անմիջականորեն ենթարկվում են Վարչության պետին:

19. Վարչության ներքին կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների բացակայության դեպքում նրանց փոխարինում են համապատասխան ստորաբաժանումների գլխավոր մասնագետներից որևէ մեկը, իսկ նրանց բացակայության դեպքում՝ ստորաբաժանումների մասնագետներից որևէ մեկը՝ ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ:

20. Վարչության ներքին կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմված գրությունների նախագծերը դիտասևեռվում են այն անմիջականորեն պատրաստած մասնագետի և համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կողմից:

21. Վարչության ներքին կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց հանձնարարված աշխատանքները կատարում են սույն կանոնադրության 9-րդ կետին համապատասխան: